Արձանագրություն N 6

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 05.05.2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ոստանիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խաչատրյանը, Ա. Ստեփանյանը, Ռ. ՈՒմրոյանը, Վ. Հարությունյանը, Մ. Կիրիմյանը, Մ. Ասլանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 01.05.2020 և 02.05.2020 թվականին ներկայացված հարցումներին պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ**

(Գ. Ոստանիկյան)

<u>Պարզաբանման պահանջի տեքստ հ 1</u>.

1. Արդյոք կարող է մատակարարը միևնույն չափաբաժնի առանձին քանակությունների համար առաջարկել տարբեր արտադրողների արտադրանք?

2. Արդյոք թույլատրվում է երկու միմյանց փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցել միևնույն մրցույթի տարբեր չափաբաժինների (նույն չափաբաժնին հայտ չներկայացնելու պայմանով)

3. Համաձայն ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. ապրիլի 1-ի N 2 որոշման «Երևանի քաղաքապետարան»-ի կարիքների համար՝ «Երևանի բազմաբնակարան շենքերի վերելակների (տեղադրումով և սպասարկմամբ)» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի Հավելված N 1 տեխնիկական բնութագրի գնման առարկա հանդիսացող վերելակները պետք է լինեն վերին մեքենայական սրահով:

Սակայն առանց վերին մեքենայական սրահի վերելակները մեքենայական սրահովների համեմատ ավելի թանկ չեն և ունեն մի շարք առավելություններ, մասնավորապես՝

" ավելի ժամանակակից են,
" կախված հորանի չափերից ունեն ճկուն ստանդարտ լուծում,
" աշխատում են առանց ճոպանատար անիվի (շարժիչը միանգամից միացրած է ճոպանատար թմբուկին), ինչի շնորհիվ ունեն ավելի փոքր շարժաբերի արտաքին ծավալային չափեր,
" էներգաարդյունավետ են,
" նեղ հորաններում տեղադրումը ավելի հեշտ և հարմարեցվող (ադապտիվ) է,
" ունեն առանց ռեդուկտորի մեխանիզմ, ինչի շնորհիվ աշխատում են անաղմուկ,
" էկո ընկերական են (eco-friendly), անաղմուկ աշխատանքը նշանակում է քիչ ձայնային աղտոտում,
" մեքենայական սրահի և մեքենայական սրահի հարթակի կառուցման և սպասարկման ծախսերը բացակայում են,
" ունեն հեշտ սպասարկում,
" էկոլոգիապես ավելի մաքուր են, քանի որ չեն պարունակում յուղ:

Հաշվի առնելով վերը նշվածը խնդրում ենք դիտարկել սույն տիպի, առանց մեքենայական սրահի վերելակների մրցույթի պահանջներին համապատասխան լինելու հնարավորությունը:

<u>Պարզաբանում տրամադրելու տեքստ.</u>

Հարց 1: Արդյոք կարող է մատակարարը միևնույն չափաբաժնի առանձին քանակությունների համար առաջարկել տարբեր արտադրողների արտադրանք?

Պատասխան: Գտնում ենք, որ մատակարարը միևնույն չափաբաժնի առանձին քանակությունների համար կարող է առաջարկել տարբեր արտադրողների արտադրանք, եթե այդ առաջարկները համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ մասնակիցը գնային առաջարկը պետք է ներկայացնի մեկ թվով՝ պայմանագրի / չափաբաժնի/ կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Հարց 2: Արդյոք թույլատրվում է երկու միմյանց փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցել միևնույն մրցույթի տարբեր չափաբաժինների (նույն չափաբաժնին հայտ չներկայացնելու պայմանով):

Պատասխան: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է նույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն, հրավերով նախատեսվել է, որ՝ գնման ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) արգելվում է նույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը.

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Կարգի XX-րդ բաժնով և հրավերով հստակ սահմանվել է փոխկապակցված անձանց վերաբերյալ դրույթները:

Այսինքն գտնում ենք, որ հնարավոր է փոխկապակցված անձանց նույն ընթացակարգի սակայն տարբեր չափաբաժինների միաժամանակյա մասնակցությունը:

Հարց 3: Համաձայն ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. ապրիլի 1-ի N 2 որոշման «Երևանի քաղաքապետարան»-ի կարիքների համար՝ «Երևանի բազմաբնակարան շենքերի վերելակների (տեղադրումով և սպասարկմամբ)» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի Հավելված N 1 տեխնիկական բնութագրի գնման առարկա հանդիսացող վերելակները պետք է լինեն վերին մեքենայական սրահով:

Սակայն առանց վերին մեքենայական սրահի վերելակները մեքենայական սրահովների համեմատ ավելի թանկ չեն և ունեն մի շարք առավելություններ, մասնավորապես՝

" ավելի ժամանակակից են,

" կախված հորանի չափերից ունեն ճկուն ստանդարտ լուծում,

" աշխատում են առանց ճոպանատար անիվի (շարժիչը միանգամից միացրած է ճոպանատար թմբուկին), ինչի շնորհիվ ունեն ավելի փոքր շարժաբերի արտաքին ծավալային չափեր,

" էներգաարդյունավետ են,

" նեղ հորաններում տեղադրումը ավելի հեշտ և հարմարեցվող (ադապտիվ) է,

" ունեն առանց ռեդուկտորի մեխանիզմ, ինչի շնորհիվ աշխատում են անաղմուկ,

" էկո ընկերական են (eco-friendly), անաղմուկ աշխատանքը նշանակում է քիչ ձայնային աղտոտում,

" մեքենայական սրահի և մեքենայական սրահի հարթակի կառուցման և սպասարկման ծախսերը բացակայում են,

" ունեն հեշտ սպասարկում,

" էկոլոգիապես ավելի մաքուր են, քանի որ չեն պարունակում յուղ:

Հաշվի առնելով վերը նշվածը խնդրում ենք դիտարկել սույն տիպի, առանց մեքենայական սրահի վերելակների մրցույթի պահանջներին համապատասխան լինելու հնարավորությունը:

Պատասխան:

«Երևանի քաղաքապետարան»-ի կարիքների համար՝ «Երևանի բազմաբնակարան շենքերի վերելակների (տեղադրումով և սպասարկմամբ)» ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/15 ծածկագրով բաց մրցույթի Հավելված N 1 տեխնիկական բնութագրում հստակ սահմանված է, որ գնման առարկա հանդիսացող վերելակները պետք է լինեն վերին մեքենայական սրահով, հետևաբար Ձեր կողմից առաջարկվող առանց վերին մեքենայական սրահի վերելակները չեն կարող դիտարկվել մրցույթի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 7, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Գ. Ոստանիկյան
Անդամներ՝		Ա. Խաչատրյան
		Ա. Ստեփանյան
		Ռ. ՈՒՄրոյան
		Վ. Հարությունյան
		Մ. Կիրիմյան
		Մ. Ասլանյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան